

*Արձանագրություն թիվ 8*

*ԵՊՀ-ի քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,  
կայացած 2018թ փետրվարի 27-ին*

**Օրակարգ**

1. Քննաշրջանի արդյունքների քննարկում:
2. Մագիստրոսական ծրագրերով ուսուցման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումների լսում:
3. Բազային ֆինանսավորմամբ “Ֆիզիկական քիմիայի,, ԳՀ լաբորատորիայի գիտական ղեկավարի հաշվետվություն
4. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ՝ պրոֆեսոր Տ.Վ. Ղոչիկյանը ներկայացրեց հերթական գիտխորհրդի օրակարգը:

**1. Պրոֆեսոր Տ.Վ. Ղոչիկյան**

-Օրակարգի առաջին հարցը վերաբերվում է միայն քննաշրջանի արդյունքներին այսինքն սրանք ֆակուլտետի վիճակագրական տվյալներն են մինչև լուծարքային քննությունները: I-Կուրսի մոտ (քիմիա բաժին և կիրառական քիմիա բաժին) անօրգանական քիմիա առարկայից – անբավ. գն. 3 ուսանող, բարձրագույն մաթ. առարկայից - անբավ. գն3. ուսանող, էկոլոգիա և բն. ուսումնասիրում առարկայից - անբավ.գն. 3 ուսանող: II-կուրսում ֆիզիկա առարկայից - անբավ.գն. 1 ուսանող, բարձրագույն մաթ. առարկայից - անբավ. գն. 1 ուսանող, ընդ.անօրգ.քիմիա առարկայից - անբավ.գն. 1 ուսանող, բյուրեղաքիմիա առարկայից - անբավ.գն. 1 ուսանող: III-կուրսում օրգանական քիմիա առարկայից - անբավ. գն. 4 ուսանող, կենցաղային քիմիա առարկայից - անբավ.գն. 5 ուսանող, IV կուրսում ԲՄՄ քիմիա առարկայից - անբավ. գն. 8 ուսանող, Մենդի քիմիա առարկայից - անբավ.գն. 1 ուսանող: Թվացյալ այս փոքր թվերը մեծ % են կազմում կախված ուսանողների քիչ թվի հետ: Իհարկե նույն վիճակը չէ լուծարքից հետո: Մեծ ուշադրություն պետք է դարձնել ուսանողների հետ աշխատանքներին, անհրաժեշտության դեպքում իրականացրեք նաև անհատական մոտեցում:

2. **Պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան**- Այժմ լսենք ամբիոնի վարիչների հաղորդումը մագիստրոսական ծրագրերի իրականացման վերաբերյալ:

**Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Ս.Հարությունյան**- Մագիստրատուրայում դասավանդում են 1-ՀՀ ԳԱԱ թղթ. Անդամ, 3 պրոֆեսոր և 4- դոցենտ: Այս կիսամյակում արդեն մագիստրոս II-կուրսերը դասերը ավարտել են և հիմնականում զբաղվում են մագիստրոսական թեզերի ամբողջացմամբ՝ գրական ակնարկի ձևակերպաման,թերի տվյալների վերանայմամբ: Այս ընթացքում իրականացվում է նաև մագիստրոսական թեզերի վերնագրերի ճշգրտում և հստակեցում:

**Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Շ.Ա.Մարգարյան**-Քիմիա Մասնագիտացմամբ II-կուրսի ուսանողները հիմնականում զբաղված են թեզերով: Իրականացնում և ստուգում են փորձերի վերարտադրելությունը, սկսում են ձևակերպել թեզերը: Ամբիոնը ունի ևս մեկ մասնագիտացում՝ “Մանրի քիմիա”: Այս բաժնում սովորում են 5 ուսանող և նրանք արդեն ապահովված են աշխատանքով: Այս բաժնի ուսանողներին աշխատանքի է հրավիրել ստադարտացման և որակի վերահսկողության լաբորատորիան:

**Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան** Մեր ամբիոնում մենք ունենք երկրորդ կուրսի մեկ մագիստրոս Ս.Վ.Գրիգորյանը: Նա սինթեզը իրականացնում է մեր լաբորատորիայում, իսկ ֆլորեսցենցիան և որոշ հաշվարկներ իրականացնում ֆիզ և կոլ. քիմիայի ամբիոնում: Օրգանական քիմիա մասնագիտությամբ Լկուրսի 5 ուսանող ունենք: Նրանք ամբիոնում իրականացնում են իրենց մագիստրոսական աշխատանքները: Խելացի ունողներ են:

Նիստի նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան- Ուզում եմ ևս մեկ անգամ հիշեցնել եթե ճշգրտումներ կամ ուղղումներ ունեք կատարելու ավարտական աշխատանքների կամ մագիստրոսական թեզերի վերնագրերում , ապա արագացրեք, որովհետև ամբիոնների վարիչները պետք է հայերեն, անգլերեն լեզուներով հանձնեն աշխատանքների վերնագրերը, այլևս ուղղելու հնարավորություն չի լինի:

3. **Օրակարգի հաջորդ թեման վերաբերվում է Գ/Հ/բազային լաբորատորիաների վարիչների հաշվետվությանը:** Այսօր լսելու ենք “Ֆիզիկական

քիմիա՝ Գ/Հ լաբորատորիայի վարիչ, պրոֆ. Շ.Ա.Մարգարյանի հաշվետվությունը 2017թ-ին կատարած աշխատանքների վերաբերյալ:

Շ.Ա.Մարգարյանի հաշվետվությունը կցվում է.

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը միաձայն քվեարկության արդյունքում, որոշեց արդյունավետ համարել “Ֆիզիկական քիմիա” Գ/Հ լաբորատորիայում կատարված աշխատանքները:

#### 4. Ընթացիկ հարցեր

Նիստի նախագահ Տ.Վ.Ղոչիկյան –

Այսօր թեմատիկ ֆինանսավորում ստանալու համար քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդին են դիմել “Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի”, “Անալիտիկ և անօրգանական քիմիայի”, “Օրգանական քիմիայի” ամբիոնները և Էկոլոգիական անվտանգության կենտրոնը: Գիտական խորհրդին ներկայացվում է թեմատիկ ֆինանսավորման 8 հայտ, միաժամանակ հաճույքով ուզում եմ նշել, որ ներկայացվող հայտերից մի քանիսի ղեկավարները մեր երիտասարդներն են և առաջին անգամ են ներկայացնում իրենց աշխատանքները գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմատիկ ֆինանսավորում ստանալու համար: Աշխատանքները քննարկվել են ամբիոններում և ստացել են դրական արձագանք: Այժմ նշեմ ամբիոնները, ներկայացվող թեմաների ղեկավարներին և թեմաների վերնագրերը:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոն

1. Պրոֆ. Կ.Ռ.Գրիգորյան-«Մանրարտադրական նշանակության ֆենոլային միացությունների լուծույթների սպեկտրոսկոպիան և տեսական քվանտաքիմիական ուսումնասիրությունը»
2. Դոցենտ Հ.Հ.Ղազոյան- «Հավելանյութերի առկայությամբ ԴՆԹ-ի լուծույթների ֆիզիկաքիմիական ուսումնասիրությունը»
3. Դոցենտ Լ.Ս.Գաբրիելյան-«Մարտկոցներում կիրառվող կարևոր սուլֆոնների՝ էթիլմեթիլ-, տետրամեթիլ-, դիֆենիլ- և դիբութիլսուլֆոնների քվանտաքիմիական և փորձարարական ուսումնասիրությունները »

Անալիտիկ և անօրգանական քիմիայի ամբիոն

1. Դոցենտ Լ.Ռ.Հարությունյան-«Ցորենազգիների ցողունի (ծղոտի/հարդի) մեխանիկական և ֆիզիկաքիմիական վերափոխումը թափոնաջրերից ծանր մետաղների կորզման նպատակով»

Օրգանական քիմիայի ամբիոնի

1. Դոցենտ Մ.Ա.Սամվելյան-Cu/Pd կատալիզատորներով փոխարկումներ Կ-լակտոնների բնագավառում»
2. Պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան-«Տեղակալված և ոչտեղակալված պոլիանիլինների նման կառուցվածք ունեցող պոլիմերների սինթեզ և ուսումնասիրություն»  
Էկոլոգիական անվտանգության կենտրոն
1. Ք.գ.դ. Ս.Հայրապետյան- Ջրո վալենտ երկաթ (ZVI) պարունակող սորբենտներ ծանր մետաղները և կայուն օրգանական աղտոտիչները ջրերից հեռացնելու և չեզոքացնելու համար»
2. Պրոֆ. Գ.Պ.Փիրումյան-Էկոհամակարգերի վիճակի և կարգավորվածության գնահատման ու կանխատեսման նոր եղանակների մշակում»

Հաշվի առնելով ամբիոնների կողմից տրված դրական կարծիքը

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց երաշխավորել է թեմայի ֆինանսավորումը:

Ֆակուլտետի գիտական

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղոչիկյան

Գիտ.խորհրդի

քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան